ԳԼՈՒԽ Զ.

ԱՐԵՒՄՏԱՀԱՅՈՑ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Մայիս 28-ի ակտը

1919թ. գարնան Հայաստանի կեանքի կարևոր երևոյթներից մէկն էր և Արևմտահայ երկրորդ համագումարը:

Հայաստանի Հանրապետութեան գոյութեան սկզբի շրջանում, արևմտահայութիւնը իրեն մեկուսացած էր պահում պետական կեանքից: Այդ արտայայտւում էր շատ բաներում. պետական հիմնարկութիւններում, համեմատաբար, քիչ արևմտահայ պաշտօնեաներ կային. արևմտահայ երիտասարդութիւնը պարտադիր զինուորակոչից խուսափում էր: Ուրիշ պետական պարտաւորութիւնների հանդէպ էլ արևմտահայութիւնը վերապահ էր և, առհասարակ, հարազատ չէր զգում իրեն հանրապետութեան մէջ: Անդրանիկը, որ Բաթումի դաշնագրից յետոյ իր զօրամասով ու գաղթականներով հեռացել էր Հայաստանից և ապա ամրացել Զանգեզուրում՝ թշնամական դիրք բռնելով «թիւրքերի ձեռքով ստեղծած» հանրապետութեան վերաբերմամբ, զգալի չափով արտայայտիչ էր արևմտահայերի այն ժամանակւայ մտայնութեան: Ազգային Պատիրակութիւնը Փարիզում Պօղոս փաշա Նուպարի գլխաւորութեամբ աւելի հեղինակութիւն էր վայելում արևմտահայերի մէջ, քան Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը: «Հայաստանի Հանրապետութիւն» խօսքն էլ ընդունելի չէր շատերի համար— եղածը սոսկ «Արարատեան Հանրապետութիւն էր»:

Ընդհակառակը, «Արարատեան Հանրապետութեան» կառավարութիւնը ամէն կերպ աշխատում էր վերացնել այդ խորթութիւնը և, առհասարակ, հատուածական խնդիրը Հայաստանում — մի գործ, որ, ի հարկէ, հեշտ չէր այն ժամանակւայ պայմաններում: Տասնեակ տարիներ հայ քաղաքական միտքը դաստիարակւել էր այն ուղղութեամբ, որ Հայաստանը այնտեղ էր, Բարթողեան լեռնաշղթայի միւս կողմը, հայկական հարց, Հայաստանի ինքնավարութիւն, հայ պետութիւն կարող էր լինել միայն Թիւրքահայաստանում, և, յանկարծ, բոլորովին չսպասուած տեղից՝ մէջտեղը բռնում է ինչ որ մի «Հայաստանի Հանրապետութի՛ւն» — մարսելի՞ բան էր այդ: Յետոյ, այդ «Հանրապետութեան» մէջ դեռ շատ բաներից՝ օրէնքներից ու լեզուից սկսած մինչև ներքին կարգերը, մինչև հանրային կենցաղն ու բարքերը՝ ռուսի հոտ էր բուրում: Արևմտահայութեան մտքին ու զգացմունքներին այդ բանը խորթ էր, անհարազատ: